

երբ որ իմ՝ ծունկերս կողողողան, և երբ որ իմ՝ ոյժս Բո իմ՝ վերայ զբաժ
բնոյ տակ պիտի կարլի՝

(Թ. Կ. Գ.)

Գ. Ե. Ա.

ՈՐԳԱՆԿԱՐՄԻՐ.

Նախ պէտքէ ասել, որ որդանկարմիր ամենահին ժամանակներում, մինչև անգամ՝ Նոյի առաջին սերունդների ժամանակ, դարձրել էր իւր վերայ մարդիկների ուշքը. պատճառ հին կտակարանում զրաժ Մովսէս մարգարէի ձեռով, օրինակ Ելից, Ղևտացուց և Թուոց գրքերում կարմիր ներկ արտայայտելու համար պատահումէ Տօօլատ բառը, այս բառի արմատը տօօլա է և նշանակումէ միջատ, ճճի, որդն:

Բացի դորանից մեր Աստուածաշնչում փոխանակ տօօլատ բառի ամենտեղ և միշտ դորժ է անվաճ որդան կարմիր: Որդանկարմրի առաջին գործածութիւնը՝ նիւթեղէններ ներկելու համար պէտքէ համարել 270 տարի Բրիստոսի ծննդից առաջ: Այն միջոցին, ինչպէս յայտնի է պատմութիւնից, Հռովմայեցիների թագաւոր Ավրելիանոսը ստացաւ ընծայ Պարսիկների թագաւորից բրդէ հիւսուածք պատմութեանցու, որ ամենապարզ և մաքուր կարմիր գոյն ունէր: Այս բանը երկար ժամանակ դարձել էր արժանայիշատակութեան առարկայ Պապիտօրիում և Հռովմայեցիների ընդհանուր զորմացման առարկայ, և ոչ թէ միայն Ավրելիանոսը, այլև նորա յաջորդ Պրօքը, իսկ յետոյ և Գիոլլեանոսը անպատճառ ցանկանում էին ունենալ այսպիսի ներկ, որ հանգամանքների ստորադրված չլինէր: Նոյն այս նպատակով կատարվեցաւ ճանապարհորդութիւն Հնդկաստան, բայց նոցա բոլոր որոնմունքը դուր անցան: Հինգերորդ դարում, երբ քրիստոնէական հաւատը ծաւալվեցաւ Հայաստանում, նորա հետ և լուսաւորութիւնը, որ յայտնի է «Ասկի դար Հայաստան աշխարհի» անունով, այն ժամանակի շատ մատենագիրներ և պատմաբաններ յիշումեն իւրեանց զրուածներում որդան կարմրի մասին, օրինակ Ղազար Փարպեցին իւր պատմութեան էջերում, որը բովանդակումէ Արարատի նկարագրութիւնը, համեմատելով նորան իւր պտղաբերութեան, հանքերի, բուսական և կենդանական բերքերի հարստութեան կողմից Եգիպտոսի և երկրային զրախտի հետ ի միջի այլոց ասումէ. «որ մի քանի բոյսերի արմատն ընդ կից, որոնք առհասարակ բուսումնեն եղէգնեայ ճահիճների մօտ, գոյանումեն որդեր, որոնք տալիս են ամենազնիւ կարմիր ներկ»:

Բացի դորանից մեր պատմութեան հայր Մովսէս Խորենացին մեծ Հայաստանը նկարագրելիս, որ բաղկանումէր այն ժամանակ 15 նահանգներից, որոնցից միջինն ասվումէր Արարատեան, նորա ինն նահանգները նկարագրելուց յետոյ, յարակցումէ. «Արարատեան նահանգը բովանդակումէ իւր մէջ լեռներ, դաշտեր և արտազրուժէ առատութեամբ ամեն տեսակ բերք»:

նոյնպէս և Գայլոտ լիճը, Բացի զորանից սէղ անուանված խոտի արմատում գոյանումէ որդն, որ գործ է ածվում կարմիր ներկելու համար » :

Անյայտ է լծէ ի նշ միջոցով և որքան որդանկարմիրից ստանումն այն ժամանակներում ներկ, բայց հաւանական է կարծել, որ նա պատրաստվումէր ամենաքիչ քանակութեամբ, որովհետեւ Արարատեան հովտի որդանկարմիրը հետեւեալ դարերում համարեա երբէք չէր գործածվում և միայն թափառական Քիւրդերի կանայքը ներկումն նորանով բուրգ, որից պատրաստումն գորգեր և ուրիշ հիւսուածք :

Որդանկարմրի անկումը և Հայերի անուշադիր լինելը զէպի նա շատ հեշտ կրօնատարվի, ելծէ որ մենք յիշենք ըստ այն անբաղգ քաղաքական անցքերը ու փոփոխութիւնները, որոնք տեղի են ունեցել Հայաստանում: Յետոյ XV դարի սկզբում Ասիայի և հարաւային Եվրոպայի զանազան տեղերում գտան որդանկարմրի գասին պատկանող փայտեայ կերմիսի (древесный бермистъ) ներկող յատկութիւնը և յետոյ գտնվեցաւ նմանապէս Լեհաստանում, Գերմանիայում և Ռուսիայի զանազան մասներում արմատական որդն (корневая кошениль) և վերջապէս XVI դարի կեսում Մէքսիկայի որդանկարմրի վաճառականութիւնը հարկադրեց ամենքին մոռանալ Արարատեանի գոյութիւնը: Այն ինչ նա անհամեմատ աւելի ազնիւ է և համարեա վեց անգամ մեծ է գերմանական, ռուսական և լեհական որդերից: Քի գրուանքա արարատեան որդն պարունակումէ իւր մէջ մօտ 20,000 որդեր, Մէքսիկայիներ մինչև 50,000 հատ, իսկ Լեհաստանիներ մինչև անգամ 130,000: -

Այսպէս ուրեմն, որդանկարմիրը մեղ յայտնի է և նա իւր տեղի բնակութեան նոյնիով բաժանվումէ գլխաւորապէս, Արարատեանի, Մէքսիկայի, լեհականի, գերմանականի, բացի այս տեղերից գտնվումէ նաեւ Իտալիայում և Ռուսիայի մի քանի տեղերում՝ շատ աննշան քանակութեամբ: Անցնենք այժմ մանրամասնաբար քննելու Արարատեան որդանկարմրի կեանքը և բնաւորութիւնը, որը իւր մեծութեամբ, բազմութեամբ և որ աւելին է, իւր հնութեամբ, առաւել արժանի է մեր լիուլի ուշադրութեան:

Արարատեան որդանկարմիրը, ինչպէս մեղ յայտնի է, գտնվումէ Պարսկաստանում, Հայաստանի քանի մի կողմերում, յատկապէս Լճաւանի նահանգում, այն դաշտերում, որոնք մօտ են Արարատ սարին, որից և ստացել է իւր անունը:

Այս միջատները առհասարակ բնակումն կաւոտ բլուրներում ճահիճների և ճախճախոտ եղէգների մօտ:

Արարատեան որդի մեծութիւնը երբեմն հասնումէ մինչև վեց զծի, որձերը նման են մոյգ կարմիր գոյն ունեցող փղբրիկ ճանճիկներին, ունին թափանցիկ լծեր, ստուերարկված վարդագոյն շերթերով, նոցա գլուխները փոքր են, զրահաւորված երկու մեծ, բարդ, փայլուն աչքերով և մի զոյգ երկայն սանտրանման ընչաքքով, ունին վեց ոտ և բունի ծայրում երկար, համարեա չորս անգամ մեծ ամբողջ բունից, պոչ, որ բաղկանումէ

բոլորովին սպիտակ մազերից:

Արարատեան որդանկարմրի էգերը չափազանց մեծ են արուններից, բայց չունին թևեր և իւրեանց կազմուածքին նայելով, մեծութեամբ և մինչև անգամ դոյնով, նման են մաշճակալում գտնվող մլուկներին, բայց նոցա բունը չափազանց հաստ է և ձուածն, քան թէ մլուկներինը:

Որդանկարմիրը ունի ծծուն բերան, նա կերակրվում է զանազան ծաճաշին բոյսերի արմատների հիւժով, բայց աւելի պատահում Poa pungens անուանված խոտի արմատի վերայ:

Իւր սիրահարութեան ժամանակ այն է ապրիլի վերջերում և մայիսի սկիզբներում, որզը պատրաստում է իւր ստորերկրեայ բնակութիւնը և գրեթէ ամբողջ օրեր, բացի անձրեային և մնայլոտ օրերից, անց է կացնում երկրի երեսին. մի քանի տեղերում նա ժողովվում է այնքան մեծ բազմութեամբ, որ արեգակը երբ սկսում է տաքացնել երկիրը, նորանով ծածկված աղավալները մի վերստաչափ տարածութեամբ և երբեմն աւելի երեւում են գորգի նման նկարված կարմիր նկարներով: Փոքրիկ էգերը, որոնք աւելի նկատվում են իւրեանց վարդանման թևերից և երկար մետաքսանման սպիտակ պոչից, ինչպէս աշխոյժ թիթեռներ, անհանգիստ ծախրում են իւրեանց բարեկամների շուրջ և անդադար պտղաբերում են երբեմն մէկին, երբեմն միւսին: Նախանձ նոցանում ինչպէս և շատ միջատներում չէ նկատվում: Նախ քան ձու ածելը արարատեան որդի էգերը ընտրում են poa pungens անուանված խոտի արմատները, որոնք ծածկված են գոգանման պարկերով կամ խորութեամբ, և որոնցում նոքա գնում են իւրեանց ձուերը:

Այս միջատների բեղմնաւորութիւնը, ինչպէս և ուրիշներին, անցնում է հաւատարմ սահմանից: Թէօմիւրը ապացուցեց հաստատ փորձերով, որ կան միջատների օրինակ ամիսը կամ խոտէ ոչիլը իւր կարճաժամանակեայ կեանքի ընթացքում, կարող է դառնալ 5, 904, 900, 000 հատերի ցեղապետ, իսկ Լատերէյը ասում է, որ էգ միջատը ամառնային ամիսներում ածում է իւրաքանչիւր օր 250 ձու:

Միջատների այսքան մեծ քանակութեամբ բեղմնաւորութիւնը ակամայ ծագեցնում է հարց, թէ մինչև ո՞ր աստիճան կարող էր հասնել մեր Հայաստանի որդանկարմրի վաճառականութիւնը և ինչպիսի ահազին անընդհատ օգուտ կարող էր տալ մեզ, եթէ որ մեր ուսումնականները հնում դարձնէին հարկաւոր ուշադրութիւն. բայց ոչ ոք մինչև այսօր թէ առաջնակարգ մարդիկներից, թէ ուսումնականներից և թէ դաստիարակներից իւրեանք անգամ, կարելի է ասել, չգիտեն թէ արդեօք գտնվում է Հայաստանում վերոյիշեալ որզը:

Մայիսի կէսից մինչև յուլիսի առաջին օրերը որդանկարմիրը հողի մակերեսի վերայ պատահում է շատ քիչ քանակութեամբ և նա արդէն ոչ այնպէս ուրախ ու անհոյ է, ինչպէս առաջ, այժմ նա ամբողջ օրերով և ժամերով չէ նստում արեգակի տակ, այլ անդադար վազվիւղում է իւր ստորերկրեայ բնակութիւնը, որոնում է պօս պուշկէնս խոտի արմատը, որը

շատ յարմար է նորա ձու անելու համար, որ նա այդ միջոցին իսկ ան-
ծուռնէ:

Չուերի սաղմի զարգանալու ժամանակը ենթադրուածն մօտաւորապէս
ինչպէս և ուրիշ միջատներում տասն և վեց օր, որդիները դուրս գալուց
շիտոյ արունները գործունէութիւն են ցոյց տալիս. նոքա ինչպէս և էգերը,
մնայրօտ օրերում և ցուրտ գիշերներում ժողովումն երեք կամ չորսը
երբեմն և աւելի մի տեղ, նստում են նորածին երեխաների մօտ և տաքա-
ցնումն նոցա իւրեանց մարմնի սեպհական տաքութեամբ: Անուանի Հիւ-
սօրտ բնակչոյդը ասումէ, որ եթէ միջատը ցանկանումէ տաքացնել իւր որ-
դիներին, նա այս կարող է անել կամու: Մեծացնելով իւր սեպհական
մարմնի տաքութիւնը արագ շնչառութեամբ: Այսպիսի դրութեան մէջ
միջատը շրջապատող օդի միւնըն բարեխառնութեան ժամանակ, մի
ժամում քսան անգամ աւելի է մեծացնում իւր մարմնի տաքութիւնը:
Հանգիստ դրութիւնից, հետեւաբար քսան անգամ աւելի է ունեւոյցնում օդը:
Նորածին որդը իւր սկզբնական դրութեամբ նման է փոքրիկ սպիտակ ծը-
ծիւ: որ գանձումէ դեռ ևս խոշտկում, բաղկացած է ամենանոսր բաղմա-
ծալ թաղանթներից և շուշանի կամ ծիրանի գոյն ունին — վերայ տասնե-
վեցերորդ օրը նոքա մեծանումն և սակաւ առ սակաւ նոցա մարմնի ձևերը
պարզ նկատելի են, նոքա այդ միջոցում նման են իւրեանց ծնողներին և
պատուելով իւրեանց շրջապատող պատեանը դուրս են գալիս նոցանից,
բայց երեք կամ չորս օր չեն թողնում իւրեանց բոյնը և այս ժամանակից
շիտոյ սկսումն պարզ և տաք օրերում դուրս գալ երկրի մակերևոյթի
վերայ:

Վերջացնելով այս յօդուածը, պէտքէ խոստովանած, որ արարատեան
որդանկարմբի ստորերկրեայ կեանքը մինչև այսօր քննված չէ ոչ որից:

ԱՂԷՐՈՒՆԴՐ ԵՍՍՅԵԱՆ:

ԱՆԿՈՉ ՀԻՒՐ:

(Ի-ն-ի Է-ր-թ-ի պատմութիւն) :

Մտարերումէք արդեօք, որ 20 տարի սորանից առաջ, ես գնացի հիւր
ձեր հօրեղբոր աղջիկ Մարիօնի մօտ, 26 լինէջ մենաստանը: Այն ժամանակ
նա 20 տարեկան էր և ես մէկ տարով փոքր էի նորանից: Մենք միասին դաս-
տիարակված էինք և միմեանց շատ սիրումէինք: Նորա հայրը (իմ հօրեղ-
բայրս) Լեզայեարդը շատ ժամանակ չէր որ տէր էր դարձած 2 լինէջին:
Նա հարուստ էր, և իւր կեանքի մեծ մասը Հնդկաստան էր անցուցած:
Անգլիա դառնալով նա պատահամբ իմացաւ որ 2 լինէջ մենաստանը վա-
ճառվումէ, ուստի և սաստիկ ցանկութիւն ունենալով այն գնելու, խօսեց
նորա օրրոջ միստէր Ուայլանի հետ դորա մասին, որը փողի կարօտութիւն
զգալով ստիպված էր հայրենական ժողանդութիւնը ծախելու: